ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Տուֆաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զինղեկի և «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկայի (4 դասաժամ), թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված հարցաշարերի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմվում է հաստատության կողմից և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

3. Անձը հաստատող փաստաթուղթ

4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում:

5.Ինքնակենսագրություն (Ձև 5).

6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ.

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ.

8. Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են **2024թ. հունվարի 22-ից մինչև փետրվարի 2-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թվականի փետրվարի 9-ին,** ժամը 14:00-ին, Շիրակի մարզի Տուֆաշենի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)-18-48-14 հեռախոսահամարով: